

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Պ-743-14.12.2023-ՄԻ-011/0) ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Զ. Բաթոյանի, Ս. Ղազարյանի և Ծ. Վարդանյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքների նախագծերով առաջարկվում է իրավական հիմքեր ստեղծել իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած խնդիրները լուծելու, ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարն ավելի արդյունավետ իրականացնելու, տրամադրելու արդյունավետ պաշտպանության և աջակցման միջոցներ բռնության ենթարկված անձանց, ինչպես նաև ստեղծել առավել արդյունավետ մեխանիզմներ բռնություն գործադրած անձանց նկատմամբ համաչափ սահմանափակումների կիրառման համար:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է հետևյալ դիտարկումները.

1. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ.

1) նախագծի 3-րդ հոդվածում «7-րդ հոդվածի» բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել «Օրենքի» բառը.

2) նախագծի 5-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ բռնության տեսակների հասկացությունները սահմանելիս բռնության տվյալ տեսակի ընդհանրական բնորոշում սահմանելուց բացի մասնավորեցվում են դրանցից յուրաքանչյուրի առանձին դրսևորումներ, ինչի պարագայում հարց է ծագում՝ ի՞նչ չափանիշների հիման վրա են ընտրվել հենց թվարկված դրսևորումները, իսկ նմանատիպ այլ դրսևորումները՝ ոչ: Նկատի ունենալով, որ բռնության տեսակներից յուրաքանչյուրի դրսևորումները չեն կարող սպառիչ լինել՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է ձեռնպահ մնալ դրանց մի մասի, այլ կերպ ասած՝ մոտավոր թվարկումից ևս՝ փոխարենը հստակ սահմանելով արարքը որպես բռնության այս կամ այն տեսակ որակելու համար անհրաժեշտ չափանիշները:

Հարկ է նշել, որ նախագծով որպես ֆիզիկական բռնության դրսևորում է դիտարկվում սահմանված հոգեբուժական բնույթի միջամտություններին ենթարկվելուն պարտադրելը, բժշկական օգնություն ստանալուց զրկելը կամ նման օգնությանը խոչընդոտելը, ֆիզիկական ցավ պատճառելը: Անհրաժեշտ է ընդգծել, որ բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական բնույթի միջամտությունների ենթարկվելուն պարտադրելը, բժշկական օգնություն ստանալուց զրկելը կամ նման օգնությանը խոչընդոտելը առավելապես կարող է դրսևորվել որպես հոգեբանական բռնություն, ուստի ֆիզիկական բռնության հասկացության մեջ դրա ներառումը նպատակահարմար չէ:

Բացի այդ, «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցները կամ հանդարտեցման մեթոդները կիրառվում են իրեն կամ շրջապատին ֆիզիկական վնաս պատճառելու կամ դրա իրական սպառնալիքի դեպքում, և եթե այդ սպառնալիքի վերացմանն ուղղված այլ միջոցների (բանավոր խոսքի՝ ներառյալ համոզելու միջոցով) կիրառումը բավարար չէ այն վերացնելու համար: Նշված օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-22-րդ կետերով սահմանված են «ֆիզիկական զսպման միջոց», «մեկուսացման միջոց», «հանդարտեցման մեթոդ», «ֆիզիկական ուժ»

հասկացությունները: Մասնավորապես՝ ֆիզիկական զսպման միջոցը ֆիզիկական ուժի և (կամ) զսպման մեխանիկական միջոցների (գոտու, ամրակապի) կիրառումն է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին պահելու կամ շարժումների զսպման նպատակով, մեկուսացման միջոցը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի տեղավորումն է առանձնացված սենյակում՝ նրա տեղաշարժի սահմանափակման նպատակով, հանդարտեցման մեթոդը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին նրա կամքին հակառակ դեղերի տրամադրումն է՝ անձի վարքագիծը մեղմելու (հանդարտեցնելու) նպատակով, ֆիզիկական ուժը ֆիզիկական զսպման միջոցի տեսակ է, որն ուղղված է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի զսպմանը կամ անշարժացմանը՝ համաչափ ֆիզիկական ուժ գործադրելու միջոցով (ձեռքերով հսկողություն): Բացի այդ, նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձն առանց իր, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցչի համաձայնության՝ հոգեբուժական վկայարկման արդյունքով կարող է ոչ հոժարակամ հոսպիտալացվել՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձից բխող վտանգը (ներառյալ իր կամ այլ անձանց կյանքի կամ առողջության համար) կանխելու նպատակով, եթե առանց հոսպիտալացման անձի բուժումն արդյունավետ չի կարող կազմակերպվել, և հոգեբուժական օգնության ուշացումը կարող է վտանգ ներկայացնել անձի կյանքին, առողջությանը կամ շրջապատին: Ելնելով վերը նշվածից՝ առաջարկվում է նախագծի 5-րդ հոդվածով խմբագրվող օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նշված «հոգեբուժական բնույթի միջամտությունների ենթարկվելուն պարտադրելը» հասկացությունը հստակեցնել.

3) նախագծի 5-րդ հոդվածով խմբագրվող օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում «դեղորայք» բառն առաջարկվում է փոխարինել «դեղ» բառով՝ «Դեղերի մասին» օրենքին համապատասխանեցնելու նպատակով.

4) նախագծի 5-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված լրացման արդյունքում անհրաժեշտություն կառաջանա օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի «:» նշանը փոխարինել «.» նշանով.

5) նախագծի 6-րդ հոդվածի համարակալումն առաջարկվում է վերանայել, մասնավորապես՝ «1., 2., 3., 4., 5., 6. և 7.» թվերը փոխարինել «1), 2), 3), 4), 5), 6) և 7)»

թվերով: Նույն առաջարկը վերաբերում է նախագծի համանման համարակալում ունեցող բոլոր հոդվածներին.

6) նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ կետով օրենքի 6-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ մասում առաջարկվում է հստակեցնել, թե որոշման պատճենի հանձնումը կամ պատվիրված փոստի միջոցով էլեկտրոնային փոստին կամ հաշվառման վայր ուղարկելը ինչ ժամկետում է իրականացվելու: Նույն առաջարկը վերաբերում է նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ կետով օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասում նոր լրացվող նախադասությանը: Միաժամանակ նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասով օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասում նախատեսված լրացումն ունի վերանայման կարիք, քանի որ դրա արդյունքում անհետաձգելի միջամտության որոշման պատճենը հանձնելու վերաբերյալ առկա կլինի երկու կարգավորում: Նշվածը հիմք ընդունելով՝ առաջարկում ենք լրացման փոխարեն նախատեսել փոփոխություն՝ կարգավորումը նոր խմբագրությամբ շարադրելու վերաբերյալ.

7) նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրվում է հետևյալ բովանդակությամբ՝ «Անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը սահմանվում է 20-25 օր:»: Նախագծի հիմնավորման մեջ նման ժամկետ սահմանելու վերաբերյալ առկա շարադրանքն ունի լրացուցիչ հիմնավորման կարիք.

8) նախագծի 12-րդ հոդվածի 5-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առողջապահության նախարարի 06.07.2023 թ. N 36-Ն հրամանով հաստատված՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին հոգեբուժական կազմակերպությունում հաշվառելու և հաշվառումից հանելու կարգի 2-րդ կետի համաձայն՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հաշվառումն իրականացվում է անձի բնակության վայրի տարածքը սպասարկող արտահիվանդանոցային ձևով հոգեբուժական օգնություն և սպասարկում տրամադրող հոգեբուժական կազմակերպության կողմից: Միաժամանակ պարզաբանման կարիք ունեն նույն մասում նշված՝ «ՀՀ առողջապահության նախարարության համա-

պատասխան մասնագետ» և «կանխարգելիչ բնույթի աշխատանքներ» հասկացությունները, ինչպես նաև անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ հաճախականությամբ են իրականացվելու կանխարգելիչ բնույթի աշխատանքները:

Հարկ է նշել, որ նախագծի 12-րդ հոդվածի 5-րդ մասում նկարագրված ընթացակարգը կանոնակարգվում է առողջապահության նախարարի 08.12.2021 թ. N 90-Ն հրամանի N 1 հավելվածով հաստատված արտահիվանդանոցային հոգեբուժական օգնության և սպասարկման իրականացման կարգի 3-7-րդ կետերով, ըստ որի՝ հոգեբուժական վկայարկումն իրականացվում է արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական կազմակերպություն ներկայացված անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցչի գրավոր դիմումների համաձայն: Առանց անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ առանց օրինական ներկայացուցչի համաձայնության՝ հոգեբուժական վկայարկումն իրականացվում է հետաքննության մարմնի (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի), քննիչի, դատախազի, դատարանի (իրենց վարույթային պարտականությունները կատարելիս) կողմից արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական կազմակերպություն ներկայացված գրավոր դիմումների հիման վրա: Գրավոր դիմումներում նկարագրվում են անձի գործողությունները, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ անձն ունի հոգեկան խանգարում, որի հետևանքով նա վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար: Այն դեպքում, երբ հոգեբուժական վկայարկման արդյունքում հաստատվում է, որ անձը վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար, արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական կազմակերպությունը շտապ բժշկական օգնության ծառայությանը մեկ ժամվա ընթացքում հեռախոսազանգի միջոցով հայտնում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի (այսուհետ՝ անձ) հետագա հոգեբուժական օգնությունը և սպասարկումը կազմակերպելու նպատակով հոգեբուժական կազմակերպություն տեղափոխման անհրաժեշտության վերաբերյալ:

Այն դեպքում, երբ շտապ բժշկական օգնության ծառայությանը, անձի հոգեկան վիճակով պայմանավորված, չի հաջողվում կազմակերպել անձի տեղափոխումը,

ապա արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական կազմակերպությունն անհապաղ հեռախոսազանգի միջոցով անձի բնակության վայրի ոստիկանության ստորաբաժանմանը տեղեկացնում է համապատասխան հոգեբուժական կազմակերպություն ոստիկանության ծառայողների ուղեկցությամբ անձի տեղափոխման անհրաժեշտության վերաբերյալ:

Միաժամանակ առողջապահության նախարարությունը, որպես առողջապահության ոլորտում քաղաքականություն մշակող և իրականացնող մարմին, չի հանդիսանում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, հետևաբար, չունի նաև հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ որոշում կայացնող համապատասխան մասնագետներ:

9) նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընտանիքում և կենցաղային բռնության դեմ պայքարի պետական ռազմավարությունը, բռնության ենթարկված անձանց ուղղորդման կարգը և բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիոն ծրագիրը հաստատում է կառավարությունը, իսկ նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ (...) լիազոր մարմինը մշակում է պետական ռազմավարությունը և համակարգում դրանից բխող միջոցառումների իրականացումը, ինչպես նաև մշակում է ընտանիքում և կենցաղային բռնությունից տուժած անձանց ուղղորդման կարգը: Հաշվի առնելով ընտանիքում և կենցաղային բռնության դեմ պայքարի՝ նեղ ոլորտային պատկանելության հանգամանքը՝ գտնում ենք, որ ընտանիքում և կենցաղային բռնության դեմ պայքարի վերաբերյալ առանձին պետական ռազմավարության անհրաժեշտությունը բացակայում է, իսկ համապատասխան մոտեցումները կարելի է տեղայնացնել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության շրջանակներում: Ուստի առաջարկվում է նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ կետից հանել «բռնության դեմ պայքարի պետական ռազմավարությունը,» բառերը: Նույն տրամաբանությամբ առաջարկվում է հանել նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը: Բացի այդ, հաշվի առնելով, որ կառավարությունը հաստատելու է բռնության ենթարկված անձանց ուղղորդման կարգը, ինչպես նաև բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիոն ծրագիրը, իսկ նախագծի համաձայն՝ լիազոր մարմինը պետք է մշակի միայն ընտանիքում և կենցաղային բռնությունից տուժած

անձանց ուղղորդման կարգը, առաջարկվում է հստակեցնել, թե ում կողմից պետք է մշակվի բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիոն ծրագիրը.

10) նախագծի 15-րդ հոդվածի 1-ին կետի 9-րդ ենթակետում առաջարկվում է «պարբերաբար» բառի փոխարեն հստակ նշել, թե ինչ հաճախականությամբ պետք է իրականացվի կապի միջոցների ցանկի հրապարակումը.

11) նախագծի 15-րդ հոդվածի 1-ին կետի 12-րդ ենթակետն ունի վերանայման կարիք՝ նկատի ունենալով, որն նախատեսված կարգավորումը վերաբերում է լիազոր մարմնին ենթակա՝ Միասնական սոցիալական ծառայության լիազորությանը, մինչդեռ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասը պետք է վերաբերի լիազոր մարմնի լիազորություններին: Ուստի առաջարկվում է նախագծի 15-րդ հոդվածի 12-րդ կետը նախատեսել որպես նոր կետ:

Միաժամանակ առաջարկվում է նախագծի 15-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 14-րդ հոդվածի 1-ին մասում 11-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12-րդ ենթակետ՝

«12) կազմակերպում է ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ինչպես նաև ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց աջակցության բնագավառներում աշխատող սոցիալական ոլորտի մասնագետների վերապատրաստման և վերաորակավորման գործընթացը, որի կարգը սահմանում է Լիազոր մարմնի ղեկավարը:».

12) նախագծով առաջարկվում է սահմանել աջակցության կենտրոնների հասկացությունը, որոնք համարվում են ընտանիքում և կենցաղային բռնության կամ ենթադրաբար ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց, իսկ անհրաժեշտության դեպքում այդ անձանց ընտանիքների անդամներին սոցիալական աջակցություն տրամադրող կազմակերպություններ: Նախագծով սահմանվում է, որ ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում լիազոր մարմնին իրականացնում է ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկվածներին սոցիալական ծառայություններ տրամադրող աջակցության կենտրոնների հավաստագրումը կառավարության սահմանած կարգով, հիմնադրում է աջակցու-

թյան կենտրոններ, ոչ առևտրային իրավաբանական անձանց հետ կնքում աջակցության կենտրոնի ֆինանսավորման պայմանագիր՝ կառավարության սահմանած պայմանագրի օրինակելի ձևի հիման վրա:

Այս կապակցությամբ առաջարկում ենք նախագծի 15-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետով նախատեսված ապաստարանների և աջակցության կենտրոնների հիմնադրման իրավասությունը վերապահել ոչ թե ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում լիազոր մարմին, այլ ՀՀ կառավարությանը՝ ներդաշնակ պահելով գործող օրենսդրության համասեռ կարգավորումները, ինչպես, օրինակ՝ սահմանված է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքով.

13) նախագծի 16-րդ հոդվածի՝

ա. 1-ին կետով նախատեսվում է օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ, մինչդեռ նոր խմբագրությամբ է շարադրվել նաև նշված մասի 1-ին պարբերությունը: Բացի այդ, անհրաժեշտ է նշված կետում «Ընտանիքում» բառից առաջ լրացնել «1.» թիվը,

բ. 3-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել լրացումը, քանի որ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «անձանց» բառը կիրառվում է երկու անգամ.

14) նախագծի 18-րդ հոդվածով առաջարկվում է փոփոխություն կատարել օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում, որով առաջարկվում է ապահովել ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց համար անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում (գործող օրենքում առաջնային բժշկական օգնություն), ինչպես նաև օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նախատեսվող փոփոխությունը՝ որով առաջարկվում է բժշկական հաստատություններում պարբերական վերապատրաստումներ իրականացնել ընտանիքում և կենցաղային բռնության արդյունքում բժշկական օգնության դիմած անձանց հասանելի հոգեբանական և այլ ծառայությունների մասին տեղեկացնելու, նրանց աջակցության կենտրոններ ուղղորդելու վերաբերյալ՝ կարող են հանգեցնել ՀՀ պետական բյուջեի ծախսերի ավելացման, որի չափը հնարավոր չէ գնահատել՝ համապատասխան տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված:

Ինչ վերաբերում է ՀՀ պետական բյուջեի եկամուտների ազդեցությանը, ապա նախագծերով, մասնավորապես, առաջարկվում է.

1. կարգավորել ընտանիքում, ինչպես նաև կենցաղային բռնության կանխարգելման, բռնության ենթարկված անձանց պաշտպանության և համերաշխության վերականգնման հետ կապված հարաբերությունները.

2. սահմանել, որ «Ընտանիքում և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով, ինչպես նաև 8-րդ հոդվածի 5-րդ մասի 5-8-րդ կետերով նախատեսված պահանջները ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից դիտավորությամբ չկատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկից չորս հարյուրապատիկի չափով (գործող օրենսդրությամբ տուգանքի չափը ութսունապատիկից հարյուրապատիկ է).

3. ընդլայնել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվողների շրջանակը՝ սահմանելով, որ պետական տուրքի վճարումից ազատվում են նաև նախագծով սահմանվող կենցաղային բռնության ենթարկված անձինք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ նախագծերի ընդունումը կարող է հանգեցնել ՀՀ պետական բյուջեի եկամուտների փոփոխության.

15) նախագծի 19-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված լրացման արդյունքում անհրաժեշտություն կառաջանա օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով: Բացի այդ, անհրաժեշտ է «առաջարկներ» բառից հետո լրացնել «:» կետադրական նշանը.

16) նախագծի 20-րդ հոդվածն առաջարկվում նախատեսել առանձին կետերի տեսքով.

17) նախագծի 21-րդ հոդվածից բացակայում է հոդվածի վերնագիրը, ուստի անհրաժեշտ է լրացնել «Եզրափակիչ մաս և անցումային դրույթ» բառերը:

2. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

1) նախագծի 15-րդ հոդվածով նախատեսվում է օրենսգիրքը լրացնել նոր հոդվածով, որով քրեական պատասխանատվություն է սահմանվում հետամտման համար: Գտնում ենք, որ հետամտումը նպատակահարմար է սահմանել որպես վարչական իրավախախտում՝ հաշվի առնելով, որ՝

ա. քրեական նոր օրենսգրքում հետամտման հանցակազմը հանվել է օրենսգրքից այն հիմնավորմամբ, որ դրա առավել վտանգավոր դրսևորումներն արդեն իսկ արտացոլված են օրենսգրքի տարբեր հոդվածներում: Նախագծի վերլուծությունից հետևում է, որ այն հիմնականում ՀՀ քրեական օրենսգրքի «Հոգեկան ներգործությունը» վերտառությամբ 194-րդ հոդվածի դիսպոզիցիայի մասնավոր դրսևորումների քրեականացումն է: Այսպիսի լրացումը պրակտիկայում առաջացնելու է հանցագործությունների որակման դժվարություններ, ինչպես նաև հանգեցնելու է հանցագործությունների ավելցուկային որակմանը:

Նախագծով առաջարկվող հոդվածում նկարագրվող արարքների քրեականացումը պետք է ունենա ծանրակշիռ, այդ թվում՝ քրեաբանական հիմնավորում, որն այս դեպքում բացակայում է,

բ. թեև «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան (Ստամբուլյան կոնվենցիա) դրան միացած պետություններին կոչ է անում ձեռնարկել միջոցներ հետամտումը քրեականացնելու համար, այնուամենայնիվ, կոնվենցիային միացած պետությունների մեծամասնությունը գնացել է այն որպես վարչական իրավախախտում դիտարկելու ճանապարհով: Ավելին՝ կոնվենցիան թույլատրում է ցանկացած պետության կամ Եվրոպական միությանը հայտարարելու, որ պետությունը/ԵՄ-ն օգտվում է արարքի համար ոչ քրեական սանկցիա նախատեսելու իրավունքից, քանի դեռ այն արդյունավետ է, համաչափ և համոզիչ: Կոնվենցիան ապահովում է ճկունություն երկրների տարբեր իրավական համակարգերի համար՝ թույլատրելով ոչ քրեական պատասխանատվության միջոցների նախատեսումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկվում է հարցը դիտարկել փուլային կարգավորման տիրույթում՝ սկզբում կարգավորումը նախատեսել Վարչական

իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում՝ որպես արդյունավետ և համաչափ արձագանք, այնուհետև ոչ կարճաժամկետ պրակտիկ վերլուծությամբ գնահատել դրա արդյունավետությունը և քրեականացման իրական անհրաժեշտությունը:

Ըստ այդմ՝ առաջարկվում է ներկայացված կարգավորումը նախատեսել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում՝ հոդվածի դիսպոզիցիան շարադրելով հետևյալ խմբագրությամբ՝

«Հետամտելը՝ անձին պարբերաբար ապօրինի հետևելը, տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով, նրա բնակության, աշխատանքի, ուսման կամ զբաղմունքի վայր այցելելու միջոցով կամ այլ եղանակով հաղորդակցության մեջ պարբերաբար ապօրինի ներգրավելը, անձնական իրերի վրա պարբերաբար հետքեր թողելը կամ անձի տվյալներով առցանց հաշիվներ բացելը, եթե այդ արարքը անձի մեջ վախ կամ անհանգստություն է առաջացրել իր կամ իր մերձավորի անվտանգության համար կամ նվաստացրել է անձի պատիվն ու արժանապատվությունը».

2) նախագծով առաջարկվում է փոփոխության ենթարկել նաև քրեական օրենսգրքի 508-րդ հոդվածը՝ նորմի սանկցիայից հանելով տուգանքը՝ դրա փոխարեն հանրային աշխատանք պատժատեսակը նախատեսելով: Առաջարկում ենք ձեռնպահ մնալ նման փոփոխությունից, քանի որ ոչ մեծ ծանրության հանցանքների համար որպես պատիժ տուգանքի նախատեսումը համահունչ է քրեական օրենսգրքի տրամաբանությանը և բխում է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից: Շարադրվածից հետևում է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը, ելնելով պատասխանատվության անհատականացման սկզբունքից և հաշվի առնելով հանցավորի անձը, կրնտրի համապատասխան պատժատեսակը.

3) միաժամանակ նախագծի 21-րդ հոդվածով օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետն անհրաժեշտ է վերանայել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը պարտավոր է նախատեսել նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմատիվ իրավական ակտերի, եթե ակտով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնց

համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին, կամ սահմանված իրավակարգավորումները վատթարացնում են անձի իրավական վիճակը:

Բացի այդ, նախագծի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 19-րդ հոդվածների համարակալումն անհրաժեշտ է վերանայել, մասնավորապես՝ «1.» և «2.» թվերն անհրաժեշտ է փոխարինել «1)» և «2)» թվերով: Բացի այդ, 21-րդ հոդվածի վերնագիրը բացակայում է, ուստի անհրաժեշտ է լրացնել «Եզրափակիչ մաս» բառերը:

3. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

1) գործող ՔԴՕ 234.3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը պաշտպանական որոշման կիրառման մասին հայցադիմումը քննում և դրա վերաբերյալ որոշում է կայացնում առանց դատական նիստ հրավիրելու հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելու պահից՝ տասնօրյա ժամկետում:

Կարծում ենք, որ սույն հոդվածում նախատեսված տասնօրյա ժամկետի փոխարինումը եռօրյա ժամկետով պրակտիկայում հնարավոր չի լինելու ապահովել՝ հաշվի առնելով քաղաքացիական գործեր քննող դատավորների ծանրաբեռնվածությունը և նշված ժամկետի չափազանց կարճ լինելը, ինչպես նաև այն հանգամանքը, որ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով՝ օրերով որոշվող ժամկետները հաշվարկվում են աշխատանքային օրերով: Ուստի առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածում «եռօրյա» բառը փոխարինել «հնգօրյա» բառով.

2) նախագծով առաջարկվում է պաշտպանական որոշման պատճենը բոլոր դեպքերում ուղարկել ոստիկանություն, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված լիազոր մարմին և Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն: Սակայն նախագծից պարզ չէ, թե որն է նպատակը դատարանին ծանրաբեռնել բոլոր այս մարմիններին նշված

որոշումն ուղարկելու պարտականությամբ այն պարագայում, երբ գործող կարգավորմամբ այն ուղարկվում է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է.

3) նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող լրացման արդյունքում ստացվում է, որ պաշտպանական որոշման կայացման վերաբերյալ հայցադիմումում պատասխանողի և ենթադրաբար ընտանիքում բռնության ենթարկված անձի միջև ընտանեկան և (կամ) արյունակցական կապերի մասին տեղեկությունները կարող են ներառվել միայն դրանց առկայության դեպքում:

Նախագծի ընդունման հիմնավորման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի առկա կարգավորումներով դատարանները մի շարք դեպքերում պաշտպանական որոշում կիրառելու համար ներկայացված հայցադիմումները վերադարձնում են կից փաստաթղթերի ցանկից պատասխանողի և ընտանիքում բռնության ենթարկված անձի միջև ընտանիքում և (կամ) արյունակցական կապերի մասին տեղեկատվության բացակայության պատճառաբանությամբ: Սակայն որոշ դեպքերում ամուսինները փաստացի ամուսնության մեջ են գտնվում կամ հանդիսանում են զուգընկերներ, ինչը նշանակում է, որ նման դեպքերում անհնար է ներկայացնել վերը նշված փաստաթղթերը: Բացի այդ, նույնիսկ համապատասխան կապը հաստատող փաստաթղթերի առկայության դեպքում միշտ չէ, որը ընտանիքում բռնության ենթարկված անձը կարող է դրանք ներկայացնել, մասնավորապես, փախուստի պատճառով: Ուստի անհրաժեշտ է նման փաստաթղթերը ներկայացնելու պահանջը սահմանել որպես ոչ պարտադիր:

Այս կապակցությամբ գտնում ենք, որ պատասխանողի և ենթադրյալ բռնության ենթարկված անձի միջև որոշակի, մասնավորապես, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի կիրառման իմաստով նշանակություն ունեցող կապերը հաստատող տեղեկությունները ներկայացնելու պարտադիր պահանջը վերացնելը խնդրահարույց է՝ նկատի ունենալով, որ պաշտպանության ենթակա, համապատասխանաբար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ գործերի վարույթի պատշաճ սուբյեկտ հանդիսանալու հանգամանքը չի կարող հավաստվել այլ կերպ, քան համապատասխան տեղեկությունների հիման վրա:

Ավելին՝ կարծում ենք, որ անձանց՝ փաստացի ամուսնության մեջ գտնվելու կամ գուզընկերներ հանդիսանալու փաստն ինքնին չի բացառում այդ անձանց միջև որոշակի հարաբերությունների առկայության փաստը հավաստող ապացույցներ ունենալու հնարավորությունը և դրանց ներկայացման անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է այն պնդմանը, որ հաճախ այդ փաստաթղթերը հնարավոր չի լինում ներկայացնել, մասնավորապես, բռնության ենթարկված անձի փախուստի դիմելու պատճառով, ապա այս կապակցությամբ գտնում ենք, որ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ի տարբերություն անհետաձգելի միջամտության որոշման, որը կայացվում է ոստիկանության իրավասու ծառայողի կողմից, անմիջականորեն սպառնացող վտանգը կանխելու նպատակով՝ այդ որոշմամբ ապահովվելով բռնության ենթարկված անձի հրատապ պաշտպանությունն ապահովող սահմանափակումներ, պաշտպանական որոշումը կայացվում է դատական կարգով: Ուստի գտնում ենք, որ նախագծի հիմնավորման մեջ այս առնչությամբ բարձրացված մտահոգությունը վերացնելու նպատակով կարող է նախատեսվել կարգավորում առ այն, որ այն դեպքերում, երբ անձը հայցադիմում ներկայացնելու պահին հնարավորություն չունի ներկայացնելու համապատասխան տեղեկությունները, կարող է միջնորդություն ներկայացնել որոշակի ժամկետում դրանք դատարան ներկայացնելու կամ դատարանի կողմից դրանք հետագայում ձեռք բերելու վերաբերյալ:

4) նախագծի 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.4-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված փոփոխությունն առաջարկվում է հանել՝ նկատի ունենալով, որ 4-րդ մասը նախատեսվում է նոր խմբագրությամբ շարադրել, իսկ 5-րդ մասը՝ ուժը կորցրած ճանաչել:

Բացի այդ, նախատեսված փոփոխության արդյունքում անհրաժեշտություն կառաջանա համապատասխան փոփոխություն նախատեսել նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 1.2-րդ մասում:

Միաժամանակ նախագծի 1-ին հոդվածի «234.4.» թիվն անհրաժեշտ է փոխարինել «234.4-րդ» բառով՝ համապատասխան փոփոխություններ կատարելով նաև մյուս հոդվածներում: Բացի այդ, անհրաժեշտ է 1-ին հոդվածի «ավելացնել» բառը

փոխարինել «լրացնել» բառով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտում լրացումներ կատարվում են դրանում նոր բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ, նախադասություններ, բառեր, թվեր կամ կետադրական նշաններ լրացնելու միջոցով: Բացի այդ, 5-րդ հոդվածի վերնագիրը բացակայում է, ուստի անհրաժեշտ է լրացնել «Եզրափակիչ մաս» բառերը:

4. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծով առաջարկվում է բարձրացնել 206.16-րդ հոդվածով անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելու համար նախատեսված տուգանքի չափը: Հիմնավորմամբ նշվում է, որ նախատեսված սանկցիայի չափը ցածր է, քանզի չի ապահովում այդ դեպքում պատասխանատվության նպատակների իրականացումը: Սակայն հիմնավորմամբ ներկայացված չէ որևէ փաստարկ (վիճակագրություն և այլն), որով կհիմնավորվի, թե ինչու Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգրքով նախատեսված տուգանքի չափը չի ապահովել հիմնավորմամբ նշված նպատակների իրականացումը:

Միաժամանակ նախագծի 1-ին հոդվածում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի լրիվ անվանման հիշատակումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին: Բացի այդ, «Ընտանիքում» բառից առաջ լրացնել «1.» թիվը, իսկ «Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «օրենքի» բառով: Միաժամանակ նկատի ունենալով, որ նախատեսված փոփոխության արդյունքում բարձրացվում է տուգանքի չափը և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը պարտավոր է նախատեսել նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմատիվ իրավական ակտերի, եթե

ակտով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջն իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին, կամ սահմանված իրավակարգավորումները վատթարացնում են անձի իրավական վիճակը՝ անհրաժեշտ է 2-րդ հոդվածով նախատեսված ուժի մեջ մտնելու ժամկետը վերանայել, ինչպես նաև նշված հոդվածում լրացնել վերնագիր՝ «Եզրափակիչ մաս» բառերով:

5. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծի 1-ին հոդվածում օրենսգրքի լրիվ անվանումն առաջարկվում է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին:

Միաժամանակ նախագծի 1-ին, 2-րդ և 4-րդ հոդվածների «Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով» բառով: Բացի այդ, 5-րդ հոդվածի վերնագիրը բացակայում է, ուստի անհրաժեշտ է լրացնել «Եզրափակիչ մաս» բառերը:

6. «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծի 1-ին հոդվածից առաջարկվում է հանել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը, քանի որ հիշյալ նախագծում այդ բառերն առաջին գործածումից հետո այլևս չեն գործածվում, իսկ «շարադրել հետևյալ բովանդակությամբ» բառերը փոխարինել «շարադրել հետևյալ խմբագրությամբ» բառերով:

Բացի այդ, նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրը բացակայում է, ուստի անհրաժեշտ է լրացնել «Եզրափակիչ մաս» բառերը:

7. «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծի 1-ին հոդվածից առաջարկվում է հանել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը, քանի որ հիշյալ նախագծում այդ բառերն առաջին գործածումից հետո այլևս չեն գործածվում, իսկ «շարադրել հետևյալ բովանդակությամբ» բառերը փոխարինել «շարադրել հետևյալ խմբագրությամբ» բառերով:

Բացի այդ, նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրը բացակայում է, ուստի անհրաժեշտ է լրացնել «Եզրափակիչ մաս» բառերը:

8. «Հաշտարարության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված լրացումն ունի վերանայման կարիք՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը, համաձայն որի՝ փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել նաև սահմանված կարգով պաշտոնապես հրապարակված, սակայն ուժի մեջ չմտած նորմատիվ իրավական ակտում կամ դրա ուժի մեջ չմտած մասում, իսկ այն դեպքում, երբ ակտն արդեն ինկորպորացվել է, ապա հիմնական նորմատիվ իրավական ակտում: Տվյալ դեպքում հիմնական ակտի 2-րդ հոդվածի 5-րդ մասը ինկորպորացված չէ, ուստի դրանում փոփոխություն կատարել հնարավոր չէ: Բացի այդ, 3-րդ հոդվածի վերնագիրը բացակայում է, ուստի անհրաժեշտ է լրացնել «Եզրափակիչ մաս» բառերը:

Միաժամանակ նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում «շարադրել հետևյալ բովանդակությամբ» բառերն առաջարկվում է փոխարինել «շարադրել հետևյալ խմբագրությամբ» բառերով:

9. «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծի 1-ին հոդվածի «Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «օրենքի» բառով, իսկ «շարադրել հետևյալ բովանդակությամբ» բառերը փոխարինել «շարադրել հետևյալ խմբագրությամբ» բառերով: Բացի այդ, 2-րդ հոդվածի վերնագիրը բացակայում է, ուստի անհրաժեշտ է լրացնել «Եզրափակիչ մաս» բառերը:

10. «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծի 1-ին հոդվածից առաջարկվում է հանել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը, քանի որ հիշյալ նախագծում այդ բառերն առաջին գործածումից հետո այլևս չեն գործածվում, իսկ նախագծի 1-ին և 2-րդ հոդվածների «շարադրել հետևյալ

բովանդակությամբ» բառերն առաջարկվում է փոխարինել «շարադրել հետևյալ խմբագրությամբ» բառերով:

Միաժամանակ բացակայում է նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրը, ուստի անհրաժեշտ է լրացնել «Եզրափակիչ մաս» բառերը: